

ՔՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Պատմ. ցիտ. ցուցան. Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

1. «Վահրիճի ի Վահրիճայ»

Հատուկ անունների այս կապակցությունը մատենագրության մեջ մեկ անգամ է գործածվել՝ Փավստոս Բուզանդի երկում (դպրութիւն Դ, գլ. 1): Ընդարձակ խորագրով կարճառոտ այդ դրվագը IV դարի հայոց պատմության կարևոր անցքերից մեկի մասին է պատմում, որ տեղի է ունեցել պարսից Շապուհ II Նրկարակյաց արքայի և հայոց Արշակ II թագավորի օրոք՝ 364—367 թթ. արանքում: Վերընթերցենք Փավստոսի վկայությունը.

«Յադուցս Վահրիճայ, որ շոբեհարիւր բիւրուն գայր հասանէր, տայր պատերազմ քնդ Արշակայ արեային, և զի արդ մատենցաւ ի ձեռն Վասակայ զօրավարին Հայոց ամենայն զօրօքն հանդերձ:

Ապա գայր հասանէր Վահրիճի ի Վահրիճայ, և զօրքն Պարսից շորեհհարիւր բիւրուն առաքեալ ի Շապուհ արքայէն ի վերայ Հայաստան աշխարհին, աւար առնուլ և կորուսանել զերկիրն զօրացն թագաւորութեանյն Հայոց. և գային հասանէին ի տեղին, որ կոչին Մախազեան: Ապա քառասուն հազարաւ ելանէր Վասակ զօրավարն քնդդէմ նոցա. հարկանէր սատակէր զզօրս նոցա, սպանանէր զՎահրիճն և կոտորէր զզօրսն Պարսից, և ոչ թողոյր ի նոցանէ և ոչ մի, և զգուշանայր զսահմանօք երկրին խրոյ» (Դ, 30):

Ներկա դեպքում մեզ զբաղեցնողը մանրամասների հավաստիության խնդիրը չէ, մանավանդ որ «շորեհհարիւր բիւր» (իմա շորս միլիոն) Պարսկաստանի ողջ բնակչությունը չէր կազմի, ինչ մնաց այդքան զորք Հայաստան ուղարկվելու: Բայց որ Մախազեան կոչվող տեղանքում Վահրիճի և Վասակ Մամիկոնյանի բանակների ճակատամարտ է տեղի ունեցել, և հայոց սպարապետը շահել է այն՝ կարելի է չկասկածել և պիտի փաստասանք հայտնել, որ հերոսամարտի այս օրինակը տեղ չի գտել «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական բազմահատորյակի երկրորդ գրքում:

Պարսից զորապետի անունը դրվագում երեք անգամ է հիշվում, որից երկուսը նույնական է՝ Վահրիճ, իսկ մեկը մասնավորեցնող կապակցությամբ՝ Վահրիճի ի Վահրիճայ: Փավստոսի բոլոր հրատարակություններում ընթերցումը նույնն է և դժվար է ասել, թե ընդօրինակողները «ի Վահրիճայ»-ի տակ ի՞նչ են հասկացել՝ Վահրիճից իբրև հայրանուն-տոհմանուն, թե՞ տեղանք, որտեղից նա եկել է: Բնականաբար, Փավստոսի թարգմանություններում պիտի փնտրենք հարցումի հստակ պատասխանը: Մ. էմինի Ֆրանսերեն թարգմանության մեջ «Վահրիճ [որդի] Վահրիճի» է (Vahridch [fils] de Vahridch, տե՛ս Վ. Լանգուայի Collection-ի I հատորը, Փարիզ, 1867, էջ 262): Մ. Լաուերը տառացիորեն հարազատ է մնացել գրաբարյան բնագրին, ուստի գերմաներենում պահպանել է նույնիսկ հայերենի հոլովական վերջավորությունը՝ Vahridch aus Vahridcha (Քյոլն, 1879, էջ 116): Պարզ է, որ նա չի հետևել ֆրանսերենին և Վահրիճայ-ն ընկալել է իբրև տեղանուն, ուստի և գործածել aus նախդիրը (-ից): Փավստոսի հաջորդ թարգմանիչները, ցավոք, ուշագրություն չեն դարձրել Մ. Լաուերի այս կռահմանը՝ հավանաբար Վահրիճ տեղանվան կամ վարչական միավորի շարժության թելադրանքով: Ստ. Մալխասյանցը հետևել է Մ. էմինին, իսկ Մ. Գեորգյանն ու Ն. Գարսոյանը՝ Ստ. Մալխասյանցին («Վահրիճի (որդի) Վահրիճը», Вахрич, сын Вахрича, Vahric the son of Vahric), «Վահրիճի որդի» թարգմանողները թերևս նկատի են ունեցել պահլավերենի քերականական նորմը, երբ հատկացուցիչն ու հատ-

կայցյալը հարաբերվում են իզաֆեդով (օրինակ՝ Farraxvart i Vahraman-վահրամի Ֆառախվարտ, իմա վահրամի որդի Ֆառախվարտ, որ «Սասանյան դատաստանագրքի» հեղինակն է)։ Նման ենթադրությունը բնականոն կլիներ երեք պարագայում՝ ա) եթե զորապետի երեք հիշատակումներում էլ ունենայինք անուն-հայրանունը, այլապես հասկանալի չէ, թե ինչու՝ երկու անգամ սոսկ վահրին է և մեկ անգամ՝ վահրինի որդի վահրին։ բ) Եթե պահլավերենի իզաֆեդի առկայության դեպքում շունենայինք հայերենի թեք հոլովածներ՝ վահրինայ, որ փաստորեն կրկնություն է (այստեղ խոսքը չի վերաբերում լեզուների պատմության մեջ հայտնի այն դեպքերին, երբ մասնիկն այլևս չի գիտակցվում, ուստի կրկնում է նորով, ինչպես օրինակ՝ mardom + an, գրք + ան և այլն)։ գ) Եթե Փավստոսը պահլավական կապակցությունը պահպանելու հակում ունենար, ապա նրա երկը կարող էր մեկից ավելի գործածության օրինակներ տալ։

Այսպիսով, ի վահրինայ գրելիս Փավստոսը նկատի պիտի ունենար այն վայրը, որտեղից պարսից զորքը եկել-հասել էր Մախազեան և պարտություն կրել։ Եվ քանի որ Պարսկաստանի պատմական աշխարհագրությունը վահրին անունը կրող բնակավայր կամ վարչական-աշխարհագրական միավոր չգիտեմ՝ ստիպված ենք առկա տեղանվան մեջ գրչական հիմքի վրա առաջացած վրիպակ ենթադրել։ Հիրավի, Պարսկաստանում կահին կամ կահինան անունը կրող մի քանի բնակավայր կա, այդ թվում և Մախազեանից ոչ շատ հեռու՝ Քավրիզից հյուսիս։ Ամենևին չբացառելով Փավստոսի երկաթագիր կամ բուրդագիր բնագրում և—վ հնարավոր շփոթը (կահին > վահրին > վահրին), հակված ենք կարծելու, թե պատմիչի ինքնագրում նախապես վահրին պիտի ըններ, և այս պարագային Ղ—վ շփոթը շատ ավելի դուրսին է (կահին և կահինան տեղանունների տեղադրության ու նրանց վերաբերող աղբյուրների մատենագիտության մասին տե՛ս Վ. Մինորսկու հոդվածը «Islam in the pedistal»-ում, հ. 7, էջ 5—6)։

2. «Աղօթանոց»

Հիմնարառի և ածանցի հաճախադեպ գործածության և միանշանակ իմաստի պատճառով տերմինի ճշգրտման անհրաժեշտություն չի նկատվում, մանավանդ որ մատենագրության մեջ այն վկայված է իր հստակ նշանակությամբ՝ «տուն և տեղի աղօթից, եկեղեցի, տաճար, մատուռ» (ՆՀԲ, Ա, 47)։ Սակայն այս իմաստները խիստ անհարիր են «աղօթանոցի» գործածության մի դեպքի համար, որին հանդիպում ենք «Վկայաբանություն սբբոյն Շուշանկայ» հայերեն ընդարձակ խմբագրության բնագրում։ Այստեղ կարդում ենք. «Նու էր հանդերձ նորա ի մերկուց քարձ և ի վերոյ պարեգոտ անտիոպգի, և բարձիկ փոխիկ մաշկեայ ի սնարս, և աղօթանոց փոքրիկ, և բոկոան ևս, և կերակուր՝ հաց գարեղեն և ջուր բմպելի» (Ի. Արուստանի հրատ., էջ 38—39)։ Ընդգծված արտահայտությունը տարբերակում շունի, հետևաբար գրիչների համար լիովին հասկանալի է եղել, սակայն պարզ չէ, թե «աղօթանոց» ասելով նրանք տերմինիս վերը բերված նշանակություններն են հասկացել, թե՞ այսօր մեզ անծանոթ մի այլ իմաստ։ «Վկայաբանության» նորօրյա թարգմանիչներից Պ. Պետերսը այն ընկալել է որպես «աղոթքի թախտ» (մահին) և թարգմանել cum scabeilo precatirio (Anal. Boll., 1925, t. 53, p. 22, § 15), մինչդեռ Ի. Արուստանի և Ք. Տեր-Շավթըլյանը ՆՀԲ տված նշանակությունները իրավացիորեն անհարիր են նկատել շարադրանքին և «աղոթագիրք» թարգմանել (لوحظت صوابة, МОЛИТ-венник)։

Սակայն ուղադրության պետք էր առնել, որ «Վկայաբանության» հեղինակը խոսում է բանտում գտնվող շղթայակապ Շուշանիկի ծայրահեղ ճգնա-

կեցութեան մասին՝ մերկ մարմնին քուրձ հագած, վրայից՝ անտիրքյան պարեգոտ, մաշկյա փոքրիկ մի բարձ, նաև բոկոտն ու գարի հացով ու ջրով սըն-մող: Թվարկած այս պարագաների շարքում աղոթագիրքը՝ անելիք ռուսի որովհետև նրա մեծ կամ փոքր լինելը Շուշանիկի կրած զրկանքը չի բացահայտում: Ավելին, «աղոթանոցը» կամ հանդերձանքի շարքը պիտի լրացնեն, կամ մարմնական ինչ-որ վիճակ ներկայացնեն, որին հաջորդելու էր «բոկոտն ևս» լինելը: Քանի որ երկրորդ պարագան ինքնին բացառվում է (աղոթ-ք բառի ներկայությունն այդ է ասում), ուրեմն «աղոթանոց փոքրիկը» վերաբերում է բարձի առկայության հետ համատեղվող կենցաղային մի ինչ-որ հարմարանքի կամ առարկայի:

«Վկայաբանութեան» հայերեն մյուս խմբագրությունները (համառոտ, հայտնավորքային) ընդարձակի այդ դրվագը չեն ներառում, ուստի նրանց օգնութեանը դիմելու անհրաժեշտություն չկա, մինչդեռ վրացական ընդարձակ խմբագրության ընձեռած նյութը մեծապես նպաստում է մեզ հետաքրքրող տերմինի իմաստը հասկանալուն: Ահա վրացերենի համապատասխան դրվագը հայերեն թարգմանությամբ. «Ծվ այն օրից սկսած, երբվանից նրան բանտարկեցին բերդի մեջ, բարձի վրա գլուխ չէր դրել, այլ մի աղյուս էր դնում գլխատակին, և ներքնակ էր ծառայում մի հին քուրձ ճօրջօջո մարդկանց ի տես, բրդյա մի բարձ թվացնում սնարի կողմում, և երկրպագութեան համար մի փոքրիկ խսիր էր գետին փռած» (Ի. Աբուլաձեի հրատ., էջ 38—39, § 14): Ինչպես տեսնում ենք, հայերեն «աղոթանոց փոքրիկի» դիմաց վրացերենում ունենք «երկրպագութեան փոքրիկ խսիր», ուրեմն խոսքը վերաբերում է ծնրադիր աղոթելու ժամանակ գետնին փռելիք առարկային: Որ վրացերենում կոչվում է յոլոջօփսիաթ, խսիր, նիլապ: Վրացերեն այս տերմինը երկու անգամ գործածված է Լեոնտի Մրովելու երկում՝ խիստ որոշակի նշանակության տեքստում. «Ծվ ինչ յոլոջօ վրա միշտ ազդեցում էր նինոն՝ հրամայեց նրա վրա դնել այդ տղային» Յ. Ս. I 104, «Ծրք գնացին սուրբ Նինոյի կացարան և թագուհուն դրին նրա յոլոջօ վրա, սկսեց սուրբ Նինոն աղոթել...» (նույն տեղում, էջ 104²²): «Քարթլիս ցխովերայի» հայերեն լրագրության բնագրում, բարեբախտաբար, մեզ զբաղեցնող գրքի՝ «Գրքերը կրճատված չեն, և երկու դեպքում էլ վրացերեն այդ տերմինի դիմաց ունենք «մահիճ» (սեւ եղեալ զտղայն ի մաննիս իւր՝ խաչակնքեաց...», «և տարեալ՝ եզին զնա ի մաննիսն նունեայ: Եւ նա աղօթեալ երկալ: ...» (տե՛ս Ի. Աբուլաձեի, հրատ., էջ 98 և 100):

Այլևս պարզ է, որ «աղոթանոց փոքրիկը» մահիճին փոխարինող փոռ է, որ գործածվում է ծնրադիր աղօթելիս, այսինքն այն, ինչ այսօր էլ գործածական է, այդ թվում և մահմեդականների ու մովսիսականների աղօթատեղիներում: Ըստ պատրաստման նյութի այն կարող է կոչվել փսիաթ, խսիր, նիլապ, իսկ լայն առումով, անկախ նյութի բնույթից, ըստ զուտ պաշտամունքային կիրառության՝ այն կարելի է կոչել աղօթագորգ, որ աղօթագրքի հետ բնավ չփոթելու չէ: Անշուշտ, նման մի աղօթագորգ կամ խաղագորգ նկատի ունի Ղազար Փարպեցին, երբ Վահան Մամիկոնյանին հիշեցնում է, թե ինքը նրա սննդակիցն ու խաղակիցն է եղել՝ «կրելով ի խաղու գաւկնելիս ձեր զկնի ձեր» (1904 թ. հրատ., էջ 188, 11—12): Հայագետ Հ. Ջյուրդյանը վաղուց է ճշտել, որ արկանելին գորգն է, ավելի ստույգ՝ գորգի մի տեսակ, փոռ, բազմական (տե՛ս նրա՝ Գորգը Հայոց մոտ. Վենետիկ, 1947, էջ 12—14):

Շուշանիկի արկանելին «աղօթանոց փոքրիկն» է եղել, օրի վրա նա աղոթել է և որը քուրձի հետ նրան իբրև մահիճ է ծառայել: ՆշՔ-ի կազմողները տերմինիս այս գործածությունն ու իմաստը չէին կարող իմանալ, որովհետև «Շուշանիկի վկայաբանութեան» հայերեն ընդարձակ խմբագրությունը դեռ հայտնաբերված չէր, և հայագետները Շուշանիկին վերաբերող տեղեկությունները քաղում էին «Գիրք թղթոցից» և Ուխտանեսի «Պատմութիւնից»:

3. «Ամենայն ցեղ»

XI դարից սկսած սույն կապակցությունը հաճախ է գործածվում խոսակցական կենդանի լեզվի կնիքը կրող մատենագրական երկերում ու վիմագրերում: Մասնավորապես՝ այն կա նաև Գագիկ I Բագրատունու 1013 թ. արձանագրության բնագրում, որ վերջերս հայտնաբերվեց Աշտարակի Միրանավոր եկեղեցու կրկնապատը հեռացնելիս և վերծանվեց ու հրատարակվեց փխմագրագետ Ս. Սաղումյանի կողմից («Արարեր հասարակական գիտություններ», 1989, № 9, էջ 91—96): Կարևոր ու ընդարձակ այդ վավերագիրը քնդհանուր առմամբ հաջող է ընթերցված ու մեկնարանված՝ եթե չհաշվենք մի քանի վրիպումներ, որ տեղ են գտել բնագրում կամ նրա մեկնարանության մեջ: Այսպես, կարդացված է ԿԱՏԱՐԱՆԻԴԵԱ փխ. ԿԱՏՐԱՆԻԴԵԱ (տող 7), ԻՄՈՑ փխ. ՄԵՐՈՑ (տ. 11) նՁՈՎԵ, փխ. նՁՈՎԻ (ա. 15), ՅՈՅՆՍ փխ. ՅԱՅՆՍ Ի (տ. 16), Տ(Է)Ր փխ. Տ(ԵԱՌ)Ն (տ. 17): Վավերագրի սկզբնամասում Գագիկ I-ը ներկայանում է իբրև «հզար եւ տիեզերակալ շահինշահ և Հայոց Մեծաց արքայից արքայ» և ապա տալիս իր տոհմաբանությունը: Ինչպես հաճախ, այս անգամ էլ «Հայոց Մեծացի» բախտը չի բերել: Հրատարակչին այն ընկալել է իբրև «հզոր, ականավոր» (էջ 94), մինչդեռ իրականում Մեծ Հայք-ի բնականոն թեք ձևն է: Ուշագրավն այստեղ այն է, որ Բագրատունիները այլևս ոչ միայն փորձում են որպես Արշակունյաց հարցատուության ժառանգորդներ հանդես գալ, այլև իրենց տիտղոսաշար մոժեկ «արքա Մեծաց Հայոց» հորջորջումը: Որ նման քայլը սոսկ ինքնամեծարման արդյունք չէ և ռևի նաև իրավական հիմք՝ կարող ենք հավաստիանալ օտար աղբյուրների վկայությամբ ևս. Բագրատունիներին Մեծ Հայքի իշխանաց իշխան է ճանաչում Կոստանդին Միրանածինը (Հ. Բարթիկյանի թարգմ., 1970, էջ 10—11, 151), բովանդակ Մեծ Հայքի տեր՝ Հովհաննես Սկիլիցեսը (տես նույնի թարգմ., էջ 146—148): Հայաստանը Մեծ Հայք են կոչում նաև XII—XIII դդ. ասորական աղբյուրները (Միք. Ասորի, Անանուն Ծղեսացի և այլն): Նման վկայություններ կան XI—XIII դդ. վրացական աղբյուրներում, այդ թվում և Գրիգոր Պարթևի վարքի թարգմանության խորագրում և «Օրհնություն մեռոնի» ծիսակարգի բնագրում, որ «Մեծ Հայքի միտրոպոլիտ» ասելով նկատի է ունեցել Բագրատունյաց Անիում նստող հայոց քաղկեդոնական եկեղեցու առաջնորդին (տե՛ս Armeno-Georg., I, 63, II, 145): Նշանակում է՝ Գագիկի «Հայոց Մեծաց արքայից արքայ» հիշատակվելը բնավ էլ պատահական չէ: Առհասարակ Ստ. Մալխասյանցի տված մի թյուր մեկնարանությունից հետո (տե՛ս նորենացու «Պատմության» 1940 թ. հրատ., էջ 255, ծան. 1), «Հայոց Մեծացը», «Հայոց մեծեր» ընկալելը դարձել է սովորական, թեև դրա համար մտացի հիմքեր չկան: Ա. Մաթևոսյանը վերջերս համոզիչ փաստերով ապացուցեց, որ պիտի վերականգնել անգամ Խորենացու «Պատմության» իսկազիր անվանումը՝ «Պատմութիւն Հայոց Մեծաց» («Հայ. ձեռ. հիշատակ. Ե—ԺԲ դարեր», էջ ԺԳ):

Ս. Սաղումյանի մեկնարանություններում կան ուրիշ վերանայելի տեղիներ ևս, օրինակ՝ վիմագրում ժամանակի կաթողիկոս Սարգսի հիշատակությունը ամենևին չի նշանակում, թե նա «հանդես է գալիս իբրև գերագույն իրավական դեմք, որն առանց վերապահության, ակնկալիքի ու փոխհատուցման համաձայնություն է տալիս թագավորի որոշմանը՝ Աշտարակի ծանր հտրկապարտությունի զիջման վճռին» (էջ 93): Կաթողիկոսի ներկայությունը վիմագրի սկզբում ընդամենը քվադրության եզրատակ ունի, որ սովորական է: Արձանագրության 9-րդ տողի ավարտամասում վերծանության մեջ բառ է բաց թողած՝ առանց նշումի:

Դառնալով բուն խնդրին՝ մեզ զբաղեցնող «ամենայն ցեղ» կապակցությունը, պիտի նկատել, որ այն գործածված է վավերագրի հիմնական նպատակը արտացոլող նախադասության մեջ, ուստի նրա նշանակության հստակ ընկալումը կարևոր է: Ահա այդ դրվագը. «կամ եղև ինձ՝ ... ազատել զԱշ-

առաջին ի շարիյատէ հացի ամենայն ցեղի. գոր և սերմանէ ու...»: «Շարիյատ» (աշարիաթ, շարէտ» այլընթերցումներով) հողից, հացաբույսերից, այգիներից, անասուններից, բամբակից, իւրից ու ձկնից ավատատիրոջը արդյունքով կամ դրամով վճարվող հարկ էր, արդյունքի 1/10 շահով: Գազիկ Բազրատունին ոչ պատահականորեն մասնավորեցրել է, որ աշտարակցիներին ազատում է «ի շարիյատէ հացո ամենայն ցեղի», իսկ տնտեսութեան մյուս բնագավառներից գանձվողը պահպանել է: Վիմագրութեան հրատարակչը «ամենայն ցեղի»-ն ընկալել է իրրև «Աշտարակի բոլոր ցեղեր» և փակագծում բացատրել այդ ցեղերի ով լինելը՝ «առանց խտրութեան բոլոր խավերին, ազատներին ու շինականներին» (էջ 95): Իրականում «ամենայն ցեղը» վերաբերում է հացին, այսինքն՝ հացահատիկային բոլոր բույսերին՝ ցորեն, գարի, վարսակ և այլն: Գազիկ Բազրատունուց երկու ատի հետո (1015 թ.) այդ նույնը կառարել է վահրամ իշխանաց իշխանը՝ «Թողի ըզՄասդարաի շարէթս ամենայն» («Բանբեր Ծրևանի համալս.», 1976, № 1, էջ 51): Ուրեմն՝ մի դեպքում գործ ունենք հացահատիկի բոլոր տեսակներից գանձվող շարիյատը վերացնելու հետ (Գազիկ 1), մյուս դեպքում՝ «ամենայն շարէտի»՝ բոլոր արդյունքներից վճարվող շարիյատը զիջելու հետ (վահրամ): Որ «ամենայն ցեղը» հացահատիկի տեսակներին է վերաբերում և ոչ համարձեցի խավերին՝ շատ պարզ է այդ իսկ կապակցության մեկ այլ գործածությունից, որին հանդիպում ենք Տիգրան Նոննցի նշանավոր վիմագրում. նա թվարկում է եկեղեցուն նվիրված «բաղում զարդերը»՝ ոսկի և արծաթե սուրբ խաչեր, պատկերազործ խատեր, ոսկի և արծաթե կանթեղներ, մասունքներ «եւ ամենայն ցեղ սպասք յոսկո և արծաթո» («Դիվան», Ա, էջ 63): Հետևաբար «ամենայն ցեղը», «բոլոր տեսակ»-ն է (всякого рода): Գազիկ 1 Բազրատունու վիմագրում՝ հացի (իմա հացահատիկի, ընդեղենի) բոլոր տեսակները, ամենևին կապ չունենալով համայնքի խավերի կամ տոհմերի հետ: X—XIII դդ. Անիում այդ կապակցությունը բավական հաստատուն գործածություն ունեցող Գազիկ Բազրատունու անունով հայտնի «Բժշկարանում» ևս այն կա:

ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ НАБЛЮДЕНИЯ

Доктор ист. наук П. М. МУРАДЯН

Резюме

Из числа слов, терминов и выражений, фигурирующих в текстах древнеармянских нарративных и лапидарных источников и нуждающихся в установлении реального значения в данном контексте, мы рассматриваем три единицы, а именно: *Վահրիսի Վահրիճալ* у Фавста Бузанда (IV, гл. 30), *աղօթանոց* в армянской пространной редакции «Мученичества Шушаник» (XIV, 18—19) и *ամենայն ցեղ* в надписи из Аштарака Гагика I Багратуни. Изучение контекстов, привлечение новых источников и учет иноязычных данных позволяют установить конкретное значение обсуждаемых терминов и выражений, чем, собственно, и проясняется источниковедческая значимость соответствующих пассажей. Доказывается, что *Վահրիսի Վահրիճալ* значит не «Вахрич сын Вахрича», как это воспринято издателями и переводчиками «Истории Армении» Бузанда, а «Вахрич из Лахича». Следовательно, историк называет не родословие персидского военачальника, а географический пункт, откуда он отправился в поход. *«Աղօթանոց»* в «Мученичестве Шушаник» применено в значении «рогожки», «козрика», а не «молитвенника», как было воспринято переводчиками текста. *«Ամենայն ցեղ»* надписи Гагика I относится не к социальному составу общины Аштарака, как интерпретируется издателем, а указывает на освобождение от налога «шариат» хлебов «всякого рода», т. е. «всякого рода зернового продукта». Коррективы подобного порядка особенно важны для критики текстов в источниковедческо-лингвистическом плане.